



Հարգելի՛ վարկառու,

«Գուդկրեդիտ» ընկերության VIVUS.AM և KIMBI.AM վարկատեսակներից օգտվող այն վարկառուները, ում հերթական վճարման (մարման) օրն ընկած է.

• 2020 թվականի մարտի 26-ից ապրիլի 19-ը ներառյալ, մինչև 2020 թվականի ապրիլի 24-ը ներառյալ Տարբերակ Ա-ով նախատեսված 15% չափով միանվագ վճարումը կատարելով կհամարվեն Տարբերակ Ա-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Ա-ի պայմաններով: Այն վարկառուները, որոնք մինչև 2020 թվականի ապրիլի 24-ը ներառյալ նշված ժամկետում և Տարբերակ Ա-ով նախատեսված 15% չափով չափով միանվագ վճարումը չեն կատարի, ապա կհամարվեն Տարբերակ Բ-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Բ-ի պայմաններով:

• 2020 թվականի ապրիլի 20-ից մայիսի 14-ը ներառյալ, Տարբերակ Ա-ով նախատեսված ժամկետում և 15% չափով միանվագ վճարումը կատարելով կհամարվեն Տարբերակ Ա-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Ա-ի պայմաններով: Այն վարկառուները, որոնք մինչև Տարբերակ Ա-ով նախատեսված ժամկետում և 15% չափով չափով միանվագ վճարումը չեն կատարի, ապա կհամարվեն Տարբերակ Բ-ի պայմաններին համաձայնություն տված: Այդ վարկառուների համար հերթական վճարման (մարման) օրվա հետաձգումը կիրականացվի Տարբերակ Բ-ի պայմաններով:

Բոլոր այն վարկառուներն, ովքեր չեն ցանկանա օգտվել սույն առաջարկով (օֆերտա) ընձեռնված հնարավորությունից, խնդրում ենք հրաժարման մասին գրավոր դիմումով տեղեկացնել Ընկերությանը: Այդ դեպքում վճարումն անհրաժեշտ կլինի իրականացնել վարկի մարման ընթացիկ ժամանակացույցին համապատասխան:

ՈւՇԱՂԴՈՒԹՅՈՒՆ. Վերը նշված առաջարկը (օֆերտան) չի կիրառվում երաշխավորությամբ ապահովված վարկային պայմանագրերի դեպքում: Այդ պայմանագրերի շրջանակում հետաձումների մանրամասներին տեղեկանալու համար անհրաժեշտ է կապ հաստատել Ընկերության հետ հետևյալ (098) 588-005 հեռախոսահամարով:



Տարբերակ Ա. Մինչև 3 օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում.

Անհրաժեշտ է վճարման (մարման) նախորդող օրվանից սկսած մինչև 3-րդ ժամկետանց օրը ներառյալ կատարել վարկային պայմանագրով նախատեսված վճարման ենթակա նվազագույն պարտադիր (պարբերական) վճարի առնվազն 15% չափով միանվագ վճարում, որը նվազեցվելու է այդ օրվա դրության առկա վարկային պարտավորության ընդհանուր գումարից: Վճարման արդյունքում վարկային պայմանագրով սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է միանվագ վճարման կատարման օրվանից 30 օր

Ժամկետով: Հետաձգման օրվա դրությամբ առկա հաշվեգրված տոկոսագումարը, վարկի սպասարկման վճարը և այլ տեսակի բոլոր վճարները (առկայության դեպքում) անփոփոխ տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը:

Հետաձգված ժամկետի համար վարկի տոկոսագումար, սպասարկման վճար և տույժ չի հաշվարկվում, վարկը չի համարվում ժամկետանց:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Տարբերակ Բ. 4 և ավելի օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում.

Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարման (մարման) օրվանից հետո 4-րդ օրվա դրությամբ վճարում չկատարելու կամ ոչ ամբողջական վճարում կատարելու կամ վարկային պայմանագրով նախատեսված և վճարման ենթակա նվազագույն պարտադիր (պարբերական) վճարի առնվազն 15%-ի չափով միանվագ վճարում չկատարելու դեպքում, վարկային պայմանագրով սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է 34 օր ժամկետով: Հետաձգման օրվա դրությամբ հաշվեգրված, ինչպես նաև հետաձգված ժամկետի համար հաշվեգրվող տոկոսագումարը, վարկի սպասարկման վճարը և այլ տեսակի բոլոր վճարները (առկայության դեպքում) տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը: Հետաձգված ժամկետի համար տույժ չի հաշվարկվում և վարկը չի համարվում ժամկետանց:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Բոլոր այն հաճախորդներին, ովքեր չեն ցանկանում օգտվել ընձեռնված հնարավորությունից, խնդրում ենք մինչև վարկի մարման ժամանակացույցով նախատեսված, հետաձգման ենթակա վճարման օրվան հաջորդող 3-րդ օրը ներառյալ հրաժարման մասին տեղեկացնել Ընկերությանը գրավոր, այդ թվում նաև՝ էլեկտրոնային փոստի միջոցով դիմումի տեսքով:



Տարբերակ Ա. Մինչև 3 օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում

Անհրաժեշտ է վճարման (մարման) նախորդող օրվանից սկսած մինչև 3-րդ ժամկետանց օրը ներառյալ կատարել տվյալ ամսվա հերթական վճարի առնվազն 15% չափով միանվագ վճարում, որը նվազեցվելու է այդ օրվա դրության առկա վարկային պարտավորության ընդհանուր գումարից: Վճարման արդյունքում վարկային պայմանագրով սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է միանվագ վճարման կատարման օրվանից 30 օր ժամկետով, նույն ժամկետով երկարաձգվում է նաև վարկային պայմանագրով սահմանված վարկի

ամբողջական մարման (ավարտի) ժամկետը: Հետաձգման օրվա դրությամբ առկա հաշվեգրված տոկոսագումարը, վարկի սպասարկման վճարը և այլ տեսակի բոլոր վճարները (առկայության դեպքում) անփոփոխ տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը:

Հետաձգված ժամկետի համար վարկի տոկոսագումար, սպասարկման վճար և տույժ չի հաշվարկվում, վարկը չի համարվում ժամկետանց:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Տարբերակ Բ. 4 և ավելի օր ժամկետանց պարտավորություն ունենալու դեպքում

Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարման (մարման) օրվանից հետո 4-րդ օրվա դրությամբ վճարում չկատարելու կամ ոչ ամբողջական վճարում կատարելու կամ տվյալ հերթական վճարի առնվազն 15%-ի չափով միանվագ վճարում չկատարելու դեպքում, վարկային պայմանագրով սահմանված վճարման (մարման) օրը հետաձգվում է 34 օր ժամկետով, նույն ժամկետով երկարաձգվում է նաև վարկային պայմանագրով սահմանված վարկի ամբողջական մարման (ավարտի) ժամկետը:

Հետաձգման օրվա դրությամբ հաշվեգրված, ինչպես նաև հետաձգված ժամկետի համար հաշվեգրվող տոկոսագումարը, տեղափոխվում են հետաձգվող առաջիկա մարման օրը: Հետաձգման ժամկետի համար հաշվարկվող վարկի սպասարկման վճարը համամասնորեն բաշխվում է վարկի մնացորդային ժամկետի վրա: Հետաձգվող ժամկետի համար տույժ չի հաշվարկվում և վարկը ժամկետանց չի համարվում:

Հետաձգման արդյունքում փոփոխվում է վարկի մարման ժամանակացույցը, որի նոր (փոփոխված) տարբերակը մինչև այդ ժամանակացույցով նախատեսված առաջիկա վճարման օրը կտրամադրվի Ընկերությունում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով: Վարկային պայմանագրով սահմանված հետագա վճարումները ենթակա կլինեն կատարման տրամադրված մարման նոր (փոփոխված) ժամանակացույցին համապատասխան, որը կհանդիսանա վարկային պայմանագրի անբաժանելի մասը:

Բոլոր այն հաճախորդներին, ովքեր չեն ցանկանում օգտվել ընձեռնված հնարավորությունից, խնդրում ենք մինչև վարկի մարման ժամանակացույցով նախատեսված, հետաձգման ենթակա վճարման օրվան հաջորդող 3-րդ օրը ներառյալ հրաժարման մասին տեղեկացնել կազմակերպությանը գրավոր այդ թվում նաև էլեկտրոնային փոստի միջոցով դիմումի տեսքով:

Հարցերի և պարզաբանումների համար կարող եք զանգահարել (098) 588 005 հեռախոսահամարով:

Առողջություն և բարեկեցություն ենք մաղթում Ձեզ ու Ձեր ընտանիքին:

Հարգանքով,
«Գուդկրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ

«Գուդկրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ-ն վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից: